



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2023 թվականի N 431

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N2-Ն հրամանի՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Մարզային ենթակայության կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության կազմակերպություններում 2023 թվականի նոյեմբերի 1-ից անցկացնել ակտիվների և պարտավորությունների գույքագրում:
2. Կազմակերպությունների տնօրեններին՝ գույքագրումն անցկացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը և իրավաբանական բաժնին՝ գույքագրման իրականացման աշխատանքներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



2023թ. հոկտեմբերի 30  
ք. Կապան